ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ

(Ծննդյան 90-ամյակի առթիվ)

ՎԱՉԴԵՆ ԱՄԻՐԲԵԿՅԱՆ

Ականավոր հեղափոխական, գրականագետ, հրապարակախոս, ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ Արտաշես Կարինյանը (Դաբրիելյան) 90 տարեկան է արդեն։ Ծնվել է բանվորի ընտանիքում, Բաքվի Բալախանի թաղամասում, 1886 թ. նոյեմբերի 24-ին։ Հայրը՝ Բալասին, Լեռնային Ղարաբաղի ծնունդ էր, Բաքվի նավթարդյունաբերության երկարամյա ծառայող։ Մայրը՝ Տիգրանուհին, գրող Վրթանես Փափազյանի քույրն էր։ Բանվորական միջավայրը, գրասեր ընտանիքը վճռական դեր են կատարել պատանի Արտաշեսի դաստիարակության գործում, իսկ նավթաշխարհի բանվորների մասսայական գործադուլները, մայիսմեկյան ավանդական ցույցերը հեղափոխականացնող ազդեցություն են ունեցել նրա վրա, ձևավորել նրա գիտակցական կյանքը, ներշնչել առաջադիմական գաղափարներով։ Տակավին գիմնազիայում ուսումնառության տարիներին նա ընդգրկվել է հեղափոխական շարժման մեջ, մասնակցել աշակերտական անլեգալ «Նաբատ» հանդեսի հրատարակությանը, հրապարակախոսական-գրականագիտական առաջին խիզախումները կատարել։

Պրոլետարական գրականության հիմնադիր Մաքսիմ Գորկու «Հովվեկներ» պիեսի բեմադրության առթիվ Բրուտ ծածկանունով նրա հրապարակախոսական հոդվածը 1905 թ. անլեգալ կերպով լույս է տեսնում առանձին գրքույկով և արժանանում մասնագետների ուշադրությանը։

Իսկրայական ուղղության առաջին հայերեն լեգալ «Կայծ» թերթում 1906 թ. տպագրված հրապարակախոսական հոդվածում Ա. Կարինյանը սուր քննադատության է ենթարկել կովկասյան անարխիստներին, մերկացրել դաշնակցականներին, որոնք «ազգասիրության» ֆրազների դիմակի տակ էին կատարում իրենց քայքայիչ գործը։

Բաքվում Ա. Կարինյանը ծանոթացավ Վ. Ի. Լենինի մերձավոր զինակիցներ Ստեփան Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, Այլոշա Ջափարիձեի,

Վ. Կասպարովի և մյուս հեղափոխականների հետ։ Նրանց գաղափարական ազդեցության շնորհիվ նա ավելի եռանդով լծվեց բանվոր դասակարգի աղատագրության պայքարին։ Ընդգրկվելով Բաքվի աշակերտական կազմակերպությունների մեջ, Ա. Կարինյանն ակտիվ աշխատանք էր տանում ընդհատակյա խմբակներում, ուր նրա ուսուցիչներն էին հին իսկրայականներ Կիր-Պարիժերը, վիրաբույժ Օկենշևիչը, ականավոր հեղափոխական-հրապարակախոս Լյուդվիգ Կնունյանցը (հռչակավոր հեղափոխական Բոգոան Կնունյանցի եղբայրը), նշանավոր հեղափոխական-մարքսիստ Վասիլև-Յուժինը և ուրիշներ։

Բաքվի գիմնազիան ավարտելուց հետո, 1906 թ. Ա. Կարինյանը ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Պետերբուրգի հեղափոխական մթնոլորտը, համալսարանում ուսումնառությունը նշանակալի դեր խաղացին երիտասարդ հեղափոխականի ձևավորման գործում։ Այդ իմաստով բախտորոշող նշանակություն ունեցավ կոմունիստական կուսակցության հիմնադիր, համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինի հետ հանդիպումը 1907 թ. Ֆինլանդիայի Տերիոկի քաղաքում, երբ մի խումբ կովկասցի ուսանողների հետ Ա. Կարինյանը մասնակցեց ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեի կազմակերպած բոլշևիկների ժողովին։ 1907 թ. Ա. Կարինյանը մտավ կոմունիստական կուսակցության շարքերը, և ահա լոթանասուն տարի հավատարմորեն ու նվիրաբերումով ծառայում է լենինյան կուսակցության գործին ու գաղափարներին։

Ուսանողական տարիներին և հետագայում Ա. Կարինյանը, որպես բոլշևիկ-պրոպագանդիստ, ակտիվ գործունեություն է ունեցել հակամարքսիստական հոսանքների դեմ։ Բաքվի նավթային արվարձաններում՝ Բալախանիում, Սև քաղաքում և այլուր, նա ղեկավարել է մարքսիստական խմբակների պարապմունքները, հայ, ռուս, ադրբեջանցի, վրացի և այլ ազգության բանվորների շրջանում ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամությանը նվիրված զեկուցումներ, ռեֆերատներ կարդացել։ Առաջադեմ գաղափարների պրոպագանդմամբ նա բազմիցս հանդես է եկել «Կայծ» (Թիֆլիս), «Բակինսկի ռաբոչի» (Բաքու) և այլ թերթերում։

«Բակինսկի ռաբոչի» թերթի խմբագիրներ Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Ս. Սպանդարյանը և ուրիշներ ամեն կերպ խրախուսում էին երիտասարդ բոլշևիկ Ա. Կարինյանի բովանդակալից ու նպատակասլաց ելույթները, ուղղություն տալիս նրա գործունեությանը։

Պետերբուրգից Կովկաս վերադառնալով՝ Ա. Կարինյանը մարքս-լենինյան ուսմունքի դիրքերից հանդես է գալիս գրականության և արվեստի կարևորագույն խնդիրների շուրջը։ Դրա պերճախոս վկայություններն են «Կոչ» երկշաբաթաթերթում հրապարակված նրա գրականագիտական հոդվածները Ալ. Շիրվանզադեի, Ա. Շահնազարյանի ստեղծագործությունների և «Գարուն» ալմանախի մասին։ Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ հիմնադրված «Նոր խոսք» յեգալ պարբերականում լույս են տեսել Ա. Կարինյանի «Գյուղացին ռուսահայ գրականության մեջ», «Գծեր արևմտահայ գրականությունից», «Քաղաքի երգիչները» և այլ գրականագիտական-հրապարակախոսական հոդվածներ։ Խորը, բազմակողմանի վերլուծելով գրական ստեղծագործությունները, Ա. Կարինյանը բարձր գաղափարայնության դիրքերից ընդգծում է գրականության և արվեստի դերն ու նշանակությունը մարդ-

կանց դեղագիտական դաստիարակության գործում, դատապարտում գաղափարազրկությունն ու անկումային տրամադրությունները։

Ա. Կարինյանը լենինյան կոփվածքի բոլշևիկներից է. նա դաղափարական-հրապարակախոսական գործունեությունը սերտորեն շաղկապում էր հեղափոխական գործունեության հետ, գործուն մասնակցություն ունենում և ամեն կերպ նպաստում ցարիզմի դեմ ծառացած բանվորական շարժումներին։ 1913 թ. քաղաքական գործադուլի նախապատրաստությանը մասնակցելու համար, մի խումբ բոլշևիկների հետ միասին, նա Բաքվում բանտարկվում և արտաքսվում է Ցարիցին։

Ա. Կարինյանը մարտնչող հրապարակախոսի գրչով պայքարել է հանուն դրականության և արվեստի լենինյան գաղափարների։ Այս առումով անկրկնելի է չհիշել «Ռեալիզմի վերածնունդը» խորագրով նրա մի հոդվածը («Правда», 5. I. 1914):

Հայտնի է, որ «Պրավդան» նշանակալի ուշադրություն էր դարձնում նաև արվեստի հարցերին։ Ընդ որում՝ այդ պրոբլեմին նվիրված բազմաթիվ ելույթներում թերթը անցկացնում էր գաղափարական-գեղագիտական ծրագիր։ «Պրավդան», հասկանալի է, պաշտպանում էր գրականության և արվեստին մարքս-լենինյան դասակարգային, կուսակցական մոտեցման սկզբունքները, ռեալիզմի սկզբունքները։ Ռուս գրականության մեջ և արվեստում նկատվող աշխուժացումը Ա. Կարինյանը քննում է որպես «Բանվորական շարժման վերելքի ցուցանիշ։ Պրոլետարիատը ռուսական հասարակության միակ դասակարգն է,— նկատում է Ա. Կարինյանը,— որը կրկին բարձրացրեց կենսական խնդիրները և նպատակները... Եվ ահա հատկապես այժմ գեղագետ-ռեալիստները ձեռք են բերում հասարակական մեծ նշանակություն»։

Ա. Կարինյանի վերոհիշյալ հոդվածի նշանակությունը բազմիցս ընդգծվել է մասնագիտական շրջաններում, գիտական ծանրակշիռ մենագրություններում։

«Պրավդայում» են տպագրվել նաև պրոլետարական գրող Հակոբ Հակոբյանի հրատարակած «Բանվորի գրադարան» մատենաշարին, Մաքսիմ Գորկու «Հեքիաթներին» նվիրված՝ Ա. Կարինյանի գրախոսությունները։ «Պուտ պրավդի» թերթի հավելված «Ռաբոչի» պարբերականի 1915 թ. № 2-ում պրոլետարական գրողների ժողովածուի մասին գրախոսականում, արժեքավորելով ռեալիստական գրականության նշանակությունը և քննադատելով կապիտալիստական կարգերի ջատագովներին, Ա. Կարինյանը ընդգծում է, որ «Պրոլետարիատի գաղափարախոսությունը միակ առաջավոր գաղափարախոսությունն է, որովհետև պրոլետարիատը ձգտում է՝ հենվելով հասարակական զարգացման օրենքների վրա, վերակառուցել ամբողջ հին աշխարհը»։ Ա. Կարինյանը նույն գաղափարն է պրոպագանդել հայկական սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթի էջերում 1916 թ. տպագրված հրապարակախոսական, գրական-քննադատական հոդվածներում։

Ավելի ուշ, 1917 թ. Բաքվում հրապարակված «Քաղաքային ինքնավարությունը և դեմոկրատիան» գրքույկում Ա. Կարինյանը դատապարտում է Կովկասի քաղաքային դումաները, որոնք օգնում են ցարական ինքնակալությանը անխնա շահագործելու աշխատավոր ժողովրդին։ Հեղինակն ընդգծել է, որ իսկական ժողովրդական ինքնավարությունում կարող են ընտրվել միայն ժողովրդի բարօրությանը ծառայող ներկայացուցիչները։

1917 թ. Պետրոգրադում Ա. Կարինյանը ակտիվ մասնակցություն է ունենում հեղափոխական շարժումներին, գտնվելով հեղափոխական մարտիկների առաջին շարքերում։ Ա. Կարինյանի կյանքում կարևորագույն իրադարձություն էր 1917 թ. ապրիլին Վ. Ի. Լենինի վերադարձը արտասահմանից։ Պետրոդրագի Ֆինլանդական կայարանում նա լսել է մեծ առաջնորդի պատմական ճառը, որտեղ տրված էր սոցիալիստական հեղափոխության անցնելու պլանը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության բարերար ազդեցությամբ պրոլետարական Բաքվում հաղթանակեցին սովետական կարգերը։ 1918 թ. ապրիլին Ատ. Շահումյանի գլխավորությամբ ստեղծված Բաքվի ժողկոմսովետում Ա. Կարինյանն ընտրվում է արդարադատության կոմիսար։ 1918 թ. Ստ. Շահումյանի ու Ա. Ջափարիձեի առաջարկությամբ Ա. Կարինյանը նշանակվում է բանվորների և զինվորների դեպուտատների Բաքվի սովետի «Տեղեկագրի» գլխավոր խմբագիր։

Բաքվի կոմունայի, նրա տպագիր օրգանների փորձը հսկայական նշանակություն ունեցան ոչ միայն Ադրբեջանում, այլև բովանդակ Անդրկովկասում սովետական կարգերի ստեղծման և ամրապնդման համար։ Այդ պատմական փորձը ուսանելի շատ բան տվեց Ա. Կարինյանին՝ նրա հետագա հեղափոխական-հրապարակախոսական գործունեության ընթացքում՝ Մոսկվայում Ազգությունների ժողովրդական կոմիսարիատին կից հայկական գործերի կոմիսարիատում, հայերեն «Կոմունիստ» պարբերականի և «Կարմիր դրոշ» թերթի խմբագրման աշխատանքներում։

Անդրկովկասում սովետական կարգերի ամրապնդման առաջամարտիկներից էր Ա. Կարինյանը։ Կուսակցության հանձնարարությամբ նա որպես կուսակցական իրավագետ-հրահանգիչ աշխատում էր Մ. Կալինինի անվան «Սովետական Կովկաս» ագիտ-հրահանգչական գնացքում, ապա՝ Ռկ(բ)Կ Կենտկոմի հանձնարարությամբ ղեկավարում էր Պետրոգրադի Նարվա-Պետերգոֆյան շրջանի կուսակցական դպրոցը։

Այնուհետև կուսակցությունը Ա. Կարինյանին գործուղում է Հայաստան։ Այստեղ բոլշեվիկ-լենինյան Ալ. Մյասնիկյանի գլխավորած ժողկոմխորհում նա ընտրվում է արդարադատության ժողովրդական կոմիսար։ 1921 թ. վերջին, հայ գաղթօջախներում աշխատելու համար, կուսակցությունը և կառավարությունը Ա. Կարինյանին, որպես Սովետական Հայաստանի ներկայացուցիչ, գործուղում են արտասահման։ Նա Հովհաննես Թումանյանի հետ Թուրքիայում ուշագրավ հանդիպումներ է ունենում հայ աշխատավորների հետ, նրանց ծանոթացնում նորաստեղծ Սովետական Հայաստանի հանրապետության նոր կյանքի հետ։ Ապա անցնում է Աթենք։ Այնուհետև Նյու-Յորքում, Բոստոնում, Ֆիլադելֆիայում և այլուր Ա. Կարինյանը հայ աշխատավորներին ծանոթացնում է Սովետական Հայաստանի տնտեսական վիճակին։ Հայ դեմոկրատական թերթերի էջերում հրապարակված ակնարկներում նա հանգամանորեն պատմում է հայ և ռուս գրականության մասին («Արևմտահայ գրականության անցյալից», «Ուշագրավ պարբերագիրներ», «Հայ բուրժուական նացիոնալիստների ղանգեղուրյան ավանտյուրան»)։

Արտասահմանից վերադառնալուց հետո Ա. Կարինյանն Անդրկովկասում վարել է կուսակցական, պետական և ռազմական օրգաններում ղեկավար պաշտոններ։

1923—1924 թթ. Ա. Կարինյանը Մոսկվայում Անդրֆեդերացիայի մշտական ներկայացուցչի տեղակալն էր, 1924—1928 թթ. եղել է Հայաստանի Կենտգործկոմի նախագահ, ապա Թիֆլիսում երկու տարի խմբագրել է «Անդրկովկասի ժողովրդական տնտեսություն» (ռուսերեն) ամսագիրը, կարճ ժամանակ եղել է ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի կուսակցության պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ։

Ա. Կարինյանը բազմիցս ընտրվել է կուսակցական-սովետական բարձրագույն օրգաններում, եղել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի անդամ, Անդրֆեդերացիայի կենտգործկոմի նախագահության անդամ և այլն։

Տակավին պատանեկան տարիներից, ինչպես նշվեց, նա արտակարգ հետաքրքրություն է ունեցել գրականագիտության, հատկապես հրապարակախոսության նկատմամբ։ Որտեղ էլ աշխատել է Ա. Կարինյանը, միշտ գտնվել է գրականության կուսակցականության համար պայքարողների առաջին շարքերում։ Սովետական տարիներին, կուսակցական-պետական բուռն գործունեության հետ, նա պարբերականներում և առանձին գրքերում բարձրացրել է քաղաքական-գրական կյանքի հրատապ հարցեր, լենինյան գաղափարների սկզբունքներով քննել դրանք, իր հեղինակավոր խոսքն ասել։ Ա. Կարինյանի հոդվածներում և մենագրություններում կարմիր թելի պես անցնում են ժողովուրդների եղբայրական բարեկամության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարները։ Անհաշտ պայքար մղելով գաղափարական հակառակորդների դեմ, Ա. Կարինյանը գրչով ու գործով ցույց է տվել կոմունիստական կուսակցությանը, սովետական ժողովրդին ծառայելու հիանալի օրինակ։ 1924 թ. առանձին գրքով լույս է տեսել նրա «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը», 1926 թ.՝ «Հայ ազգայնականների ուղին», 1927 թ.՝ «Անդրկովկասը 1905 թվին», 1929 թ.՝ «Նավթը և հայկական հարցը», 1932 թ.՝ «Դաշնակցությունը և իր զինակիցները» և այլ մենագրություններ։

1934 թ. լույս տեսավ Ա. Կարինյանի երկերի ժողովածուն, այնուհետև տարիների ընթացքում ընթերցողների սեփականությունը դարձան «Սոցիալական պայքարի արձագանքները հայ հին գրականության մեջ», «Ռուս գրականության նշանակությունը սովետահայ գրականության համար», «Միքայել Նալբանդյանը և 19-րդ դարի 60-ական թվականների ռուս առաջավոր գործիչները», «Անտոն Չեխով», «Հովհաննես Թումանյան», «Մ. Մամուրյանը մշակույթի պատմության մասին», «Եղիշե Չարենց» և այլ մենագրություններ։

Անհամեմատ մեծ է գրականագետ և մշակույթի պատմաբան Ա. Կարինյանի վաստակը հայ պարբերական մամուլի պատմության ստեղծման գործում։ Ավելի քան երկու տասնամյակ նա գիտական պրպտումներ է կատարել այդ բնագավառում, հանրագումարի բերել ավելի քան 190 տարվա հայ պարբերական մամուլի պատմությունը, առաջին անգամ հայ պատմագրության մեջ շարադրել է պարբերական մամուլի պատմական տեսությունը։ Հրապարակի վրա են «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» երկու ստվարածավալ հատորները (Հատ. 1, 1956 թ.; Հատ. 2, 1969 թ.)։ «Ակնարկների» առաջին հատորի առաջաբանում Ա. Կարինյանը նկատում է. «մենք չենք սխալվի, եթե պնդենք, որ իր ծագման օրից մինչև այսօր հրապարակված հայ պարբերականների թիվը չորս հազարից ավելի է»։ Այս փաստը հեղինակը

հիմնավորում է 1935 թ. հետո Սովետական Միությունում հրապարակված բազմաթիվ թերթերի և ամսագրերի առատությամբ։ Հանգամանորեն կանգ առնելով մամուլի պատմաբաններ Գ. Լևոնյանի, Պոտուրյանի, Գ. Զարբհանալյանի, Ա. Ղտղիկյանի, Ալ. Երիցյանի, Զարգարյանի, Հարոյի, Մելիքսեթեկյանի, Մանվելյանի, Գալեմքյարյանի և Լեոի աշխատությունների վրա և գնահատելով դրանք, Ա. Կարինյանը ընդգծում է դրանց դրական կողմերն ու բացահայտում թերությունները, մասնավորապես նշում, որ «Այդ հեղինակները չեն ուսումնասիրել ոչ միայն արխիվներում պահված կարևոր նյութերը, այլ նույնիսկ սկզբնաղբյուրները՝ հայերեն ժուռնալներն ու լրագրերը։ Այդ հեղինակները կանգ չեն առել տարբեր երկրների ու էպոխաների առանձնահատուկ գծերի վրա և սահմանափակվել են առաձգական-մակերեսային ընդհանուր դիտողություններով։ Ամենից հատկանշականն այն է, որ անգամ «փաստագրական» ուրվագծերի հեղինակները միանգամայն ավելորդ են համարել ծանրանալ հնօրյա պարբերականների կոնկրետ բովանդակության վրա»։

Հայ պարբերական մամուլի պատմությանը նվիրված Ա. Կարինյանի «Ակնարկները» կազմում են երեք հատոր։ Առաջին հատորում ամփոփված են գաղութահայ պարբերական մամուլի նկարագրական-բնութագրական ուրվագծերը, երկրորդում գնահատվում են գաղութահայ այն պարբերականները, որոնք լույս են տեսել Արևմտյան Եվրոպայում XIX դ. սկզբից մինչև 70-ական թվականները (Վենետիկ, Վիեննա, Փարիզ, Մանչեստր)։ Երրորդ հատորը նվիրվելու է արևելահայ և արևմտահայ լրագրության պատմության զարգացման էտապների (XIX դ. 30—40-ական թվականներից մինչև 80-ական թվականները) քննությանը։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչությունը «Ժողովուրդների եղբայրության դրոշի ներքո» խորագրով վերջերս լույս ընծայեց Ա. Կարինյանի հոդվածների ժողովածուն։ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Գալոյանի «Արտաշես Կարինյան» ակնարկում հանգամանորեն բնութագրված է կոմունիստ գիտնականի անցած ուղին, արժեքավորված նրա խոշոր ծառայությունները սովետական իշխանության հաղթանակի, նոր կարգերի ամրապնդման, աշխարհում առաջին սոցիալիստական հասարակություն կառուցող մարդու կոմունիստական դաստիարակության պայքարում։

Ժողովածուում ամփոփված են մինչհոկտեմբերյան և սովետական մամուլի էջերում, ինչպես նաև առանձին գրքերում Ա. Կարինյանի տպագրած գրական-քննադատական, դիտական-հրապարակախոսական ակնարկները։ Ժողովածուն պարունակում է բազմազան հրապարակախոսական-գրականագիտական նյութեր՝ «Մաքսիմ Գորկին գեղագետ-հրապարակախոս», «Բայրոնը և Ստենդալը», «Տարաս Շևչենկո», «Ռադիշչև», «Պուշկինը այսօր», «Ալիշեր Նավոյի», «Բաֆֆին և իր ռեակցիոն քննադատը», «Չերնիշևսկին և ժուռնալիստիկայի պատմության հարցերը», «Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղին», «Կամո», «Ռուսական տպագրության 400-ամյակը» և այլն։

Բազմաշխատ հեղափոխական գործիչ ու գիտնական Ա. Կարինյանի գիտական գործունեության տեսական ու ամենաարդյունաշատ մասը կապվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հետ, ուր նա երկար տարիներ աշխատել է որպես հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիայի փոխ-պրեզիդենտի պաշտոնակատար, իր իսկ նա-

խաձեռնությամբ ստեղծված հայ պարբերական մամուլի պատմության բաժնի վարիչ և այլն։

Կուսակցությունն ու կառավարությունը միշտ էլ բարձր են գնահատել մեծ հայրենասեր գիտնականի ծառայությունները։ Ա. Կարինյանը պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով, մեդալներով և պատվոգրերով։ Գիտական ու հասարակական-քաղաքական երկարամյա գործունեության և ծննդյան 90-ամյակի առթիվ Ա. Կարինյանին վերջերս շնորհվեց սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

АКАДЕМИК АРТАШЕС КАРИНЯН

(к 90-летию со дня рождения)

ВАЗГЕН АМИРБЕКЯН

Резюме

24 ноября исполнилось 90 лет со дня рождения выдающегося революционера, публициста, ученого Арташеса Баласиевича Кариняна. Пролетарский Баку, где он родился, играл большую роль в формировании его мировоззрения. В 1907 г. он вступил в ряды Коммунистической партии.

Как в студенческие годы, так и в последующем А. Каринян всегда находился на передовой линии борьбы за освобождение рабочего класса, установление и упрочение Советской власти.

В своих публицистических статьях, напечатанных в газетах «Кайц», «Бакинский рабочий», «Нор хоск», «Правда», А. Б. Каринян пропагандировал учение марксизма-ленинизма.

В апреле 1918 года был создан совнарком Бакинской коммуны во главе со Ст. Шаумяном. А. Б. Каринян был избран народным комиссаром юстиции. После установления Советской власти в Армении партия в 1921 г. направила Кариняна в Советскую Армению, где он был избран народным комиссаром юстиции. В конце 1921 г. по возвращении из-за границы он был избран председателем ЦИК Армении, затем занимал ряд ответственных постов.

Всю сознательную жизнь коммунист ленинской закалки А. Б. Каринян тесно сочетал революционную деятельность с литературно-публицистической работой. Еще в 1914 году на страницах «Правды» была опубликована его статья «Возрождение реализма», в которой он с марксистских позиций рассматривал значение литературы и искусства в эстетическом воспитании трудящихся.

Перу публициста-литератора А. Б. Кариняна принадлежат такие монографические труды, как «Максим Горький—публицист», «Байрон и Стендаль», «Тарас Шевченко», «Пушкин сегодня», «Антон Чехов», «Великий гуманист писатель А. Паронян», «Чернышевский и вопросы истории журналистики», «Оганес Туманян» и т. д.

А. Б. Каринян основоположник научной истории армянской периодической печати. В 1956 году вышел первый, а в 1960 году второй том

его «Очерков истории армянской журналистики». Недавно издательство АН Армянской ССР выпустило в свет однотомник А. Кариняна «Под знаменем дружбы народов», который охватывает его публицистические, научные и литературоведческие статьи.

Партия и правительство высоко оценили революционную и научно-общественную деятельность Кариняна: он награжден орденами «Ленина», «Трудового Красного Знамени», медалями и почетными грамотами. В связи с 90-летнем со дня рождения недавно ему было прпсвоено звание Героя социалистического труда.